ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 633-Ա **14 դեկտեմբերի 2023 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 12-րդ հոդվածի և <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 4-ի N ԳՍ/15.2/37049-2023 գրությունը և ՀՀ վիճակագրական կոմիտեի <<ԱՐՄՍՏԱՏ>> վիճակագրական աշխատանքների ծրագիրը.

որոշում եմ՝

2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելված N 1-ի:

1. Գեղարքունիքի մարզի համայնքներում անասունների համատարած հաշվառումը կազմակերպելու համար մարզպետարանից նշանակել պատասխանատուներ ըստ մարզի համայնքների՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Հանձնաժողովին՝ մարզի տարածաշրջաններում անասունների գլխաքանակի հաշվառման աշխատանքներն իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից 18-ը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Վահան Զարոյանին:

14.12.2023

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ք. Գավառ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի դեկտեմբերի 14 - ի
N 633-Ա որոշման

ԿԱԶՄ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Պետրոսյան Մարտին	-	մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, նախագահ
Բաղալյան Հակոբ	-	ՀՀ վիճակագրական կոմիտեի Գեղարքունիքի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/
Չանդոյան Տիգրան	-	ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզային կենտրոնի պետի պաշտոնակատար /համաձայնությամբ/

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2023 թվականի դեկտեմբերի 14 - ի
N 633-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՑ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ

Պետրոսյան Մ. - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, Ճամբարակ և Սևան համայնքներ

Ջրաղացպանյան Ա. - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության գլխավոր մասնագետ, Վարդենիս և Մարտունի համայնքներ

Շահբազյան Կ. - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության ավագ մասնագետ, Գավառ համայնք

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ